լոր հայոց վրայ։ Տարիներէ ի վեր ան՝կը մշակէր այս փառասիրական ծրագիրը, և քաջալերութիւն կը ստանար նաեւ Էջմիածնի կարգ մը միաբաններէն, գլխաւորութեամբ՝ Ոնոփրիոս Երեւանցի Վարդապետին։ Այս մասին Զաքարիա Սարկաւագ կը գրէ. «Շրջէր Ոնոփրիոս ի վանորայս, և արծարծէր զչարութիւն իւր, և յիշէր զչարիսն իւր, որպէս հուր թաքուցեալ ի ներքոյ յարդի, և կամ իժ ծրարեալ ի վարշամակի. այսպէս և սա զծածուկ չարիսն իւր յիշէր առ այնոսիկ, որք իբրեւ զինքն էին անուղիղ և յանդիմանեալ ի կաթուղիկոսէն. այժմ միաբանեցոյց ընդ ինքեան և գրեցին բազում հայհոյանօք սուտս ի կաթողիկոսէն առ Եղիազար Վարդապետն, որ Պատրիարք էր Երուսաղէմի, թէ դու ե՛կ ի Ս. Աթոռս, և մեք քեզ տամք զկաթուղիկոսութիւնն Էջմիածնի՝ արքունական նոմոսիւք։ Եւ ահա առաքեցաք առ քեզ զՈնոփրիոս Վարդապետն, զի զքեզ փառաւորապէս բերցէ ի Ս. Աթոռս։ Զայս գրեցին և ընդ հաւատարմաց իւրեանց առաքեցին յառաջագոյն. և յետոյ գնաց Ոնոփրիոսն զկնի թղթոյն։ Եւ եղեւ զի կաթուղիկոսն Յակոբ բերեալ զՀեռնասուն աշակերտն իւր Խաչակ Վարդապետ Մոկուեցի՝ արար եպիսկոպոս, և եդ ի տեղի իւր Աթոռակալ և Տեղապահ. և ինքն ելեալ գնաց ի Ս. Երուսաղէմ։ Եւ այնոքիկ՝ որք միաբանեալ էին ընդ Ոնոփրիոսին՝